ՎԵՏԵՐԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՀՅՈՒՐԸԿԱԼՎԵԼ ԷԻՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

11.05.2018 15:16

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը հյուրընկալել էր Հայրենական մեծ պատերազմի մասնակից վետերան-փաստաբաններ Նարիման Միրզաբեկյանին, Հրաչիկ Գոգինյանին և Մայիս Ավետիսյանին:

Ամեն տարի ՀՀ փաստաբանների պալատում հավաքվելու ավանդույթը արժևորելով՝ վետերանները նշել են, որ Հայաստանի համար այս կարևոր փոփոխությունների ֆոնին գնահատելի են նաև փաստաբանների ջանքերն ու անմիջական մասնակցությունը մարդու իրավունքների պաշտպանության հարցերում:

Հին ընկերները դրվագներ են հիշել իրենց աշխատանքային համատեղ կենսագրությունից, պատերազմում տեսած զրկանքներից՝ հավելելով, որ կյանքն իր անակնկալներով է հետաքրքիր և յուրաքանչյուր դժվարություն ավելի ամուր է դարձնում մարդուն:

Վետերանները հումորով անդրադարձել են նաև իրենց տարիքում առաջ եկող առողջական խնդիրներին՝ միևնույն ժամանակ շեշտելով, որ դեռ երկար են ապրելու և պատրաստ են ամեն տարի ընդունել ՀՀ փաստաբանների պալատի կողմից Հաղթանակի օրվա համար կազմակերպած միջոցառման հրավերները:



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA





Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })